

կարգի հնարագործութեամբ⁽¹⁾ իրրեւ բռնի բաժնեկցութեան ընդունուած էր անոնց գործառնութեանց: Բայց քիչ ետք՝ սթափեկով և զգալով իր փոքր ձուկի դիրքը մեծ ձուկերուն մէջ՝ բացած էր իր սիրտն ու գործը ֆրէյզերներուն յԱնգղիա, որ Եւրոպայի առևտրական յանձնակատարներն ալ էին Քափամաճեանց: Ֆրէյզերներն ալ, խելամուտ Թօքստեան Մարտիրոսի ուշիմութեան, յառաջամիտ աշխատասիրութեան, գործագիտութեան և փիլիսոփայ բարեմտութեան՝⁽²⁾ կը թելադրեն զատուիլ իր Քափամաճեաններէն, և բանալով իրեն մեծկակ վարկ մը — 10-15000 — (որուն համար շա՛տ կը զչարին Քափամաճեանք)՝ սկստճառ կըլլան բարեհիմն հաստատութեանը Թօքստեան տունին, որ կէս դարէ ի վեր կը տեւէ ժիր ու մանրադէտ յաջողութիւններով՝ գլխաւորապէս իր՝

(1) Պէտք չէ միայն Քափամաճեանց վրայ առնել վերեւ յիշուած գրկահարութիւններն ամբողջապէս. Պոլիսի հին ու նոր վաճառականներէն ու Էսմաճներէն շատերն ունեցած են անոնցմէ մէյ մէկ նշանակելի մաս, մանաւանդ անոնք՝ որ չեն ունեցած ո՛չ ազնուական ծագում մը, ո՛չ սիրտի ու միտքի ազնիւ կրթութիւն մը, ո՛չ ալ մանաւանդ ճշմարիտ վաճառականութեան լայն ու փիլիսոփայ ոգի մը հեռատես: Այս կողմերով՝ յոյն և Քրմնի վաճառականք աւելի՛ ազնիւ աւելի լաւարարոյ եղած են:

(2) Փիլիսոփայութեան ու ճաշակաւոր գրականութեան մինչեւ վերջը սիրող պաշտօնասէր՝ կը հետեւէր ինք զլիաւորապէս Օկիւսդ Քոնդի իմաստասիրութեանց և Քարալլի Շէքսպիրի բարձր արտադրութեանց. խօսասէր, զուարթամիտ, խոնարհամիտ և անզգալի կերպով ալ խորագէտ, բաւական կցիր, իր գործերուն մէջ ձեռննեղեցութենէ աւելի զգուշաւոր և անցեալի դիտակոյժ միշտ ապագային նայելու նախահոգութեամբ զինուած՝ փոքր Ֆրանքլինի մը նկարագիրը կը պատկերէր ինք. երբէ՛ք մեծ շէնշող հպարտացունող պողոտաներէ չէր անցներ, երբէ՛ք մեծապայծառ ակումբներու մէջ փայլիլ չէր տենչար, այլ գործաւորական փողոցներէ շէներէ ու Խանաժ ընկերութիւններէ կախորժէր, որպէս զի «հպարտութիւն չտիրէ վրաս» կըսէր: